



ՀՀ բնակարանային տնտեսության նախարարություն

«Հայաստան. քաղաքային ջեռուցման եւ տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ/ԳԷՖ/00035799 Ծրագիր

Ապարան քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 6, 10, 12, 14, 46, 19, 23, և 25 բազմաբնակարան շենքերի կենտրոնական ջեռուցման ծրագիր

Ապարանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ և ՀՀ կառավարության աջակցությամբ 2003թ. Ապարանում կառուցվել է ջերմամատակարարման 8 համակարգ, որոնք պետք է ապահովեն քաղաքի Բաղրամյան փողոցի 10 բազմաբնակարան շենքերի (թիվ 6, 8, 10, 12, 14, 19, 23, 25, 46ա և 46բ) կենտրոնական ջեռուցումը: Անհրաժեշտ ֆինանսական միջոցները հատկացվել էին «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից:



Կառուցված 8 համակարգերից շահագործման հանձնվեց 5-ը, որոնք ապահովում էին 6 շենքերի (թիվ 6, 8, 10, 19, 23, 25) կենտրոնական ջեռուցումը (Բաղրամյան 8 շենքը 2005թ. անջատվել է համակարգից առաջարկվող ծառայություններից բնակչության հրաժարվելու պատճառով): Մնացած 3 համակարգերը չեն շահագործվել, քանի որ միջոցների բացակայության պատճառով չեն կատարվել շենքերի ջեռուցման ներքին ցանցերի նորոգման, ինչպես նաև համակարգերի թողարկման համար անհրաժեշտ որոշ սարքավորումների ձեռք բերման աշխատանքները:

Հաշվի առնելով Բաղրամյան փողոցի թիվ 12, 14 և 46 շենքերի բնակիչների խնդրանքը, 2007թ. Ապարանի քաղաքապետարանը որոշում կայացրեց աջակցել նաև այդ շենքերի կենտրոնական ջեռուցման համակարգերի գործարկմանը և դիմեց Ծրագրին: Քաղաքապետարանի և Ծրագրի միջև ստորագրվեց համագործակցության համաձայնագիր, ըստ որի Ծրագիրը պարտավորում էր աջակցել նշված 3 համակարգերի գործարկման աշխատանքներին: Նշված համակարգերի գործարկման համար Ծրագիրը տրամադրել է քաղաքապետարանին գազի 3 ծախսաչափեր:



Բաղրամյան 12 և 14 շենքերի համակարգերը գործարկվեցին 2008-2009թ. ջեռուցման շրջանին: Ծրագրի ֆինանսական աջակցությամբ 2009թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին վերակառուցվեց Բաղրամյան փողոցի թիվ 46 շենքի արտաքին ջերմային ցանցը: Վերակառուցվեցին նաև շենքի ջեռուցման համակարգի ներքին օղակները, իսկ կաթսայատանը տեղադրվեց ընդարձակման երկու անոթ՝ յուրաքանչյուրը 150լ տարողությամբ: 2009թ. դեկտեմբերի սկզբին գործարկվեց նաև Բաղրամյան 46 շենքի ջեռուցման համակարգը: Ապարանի քաղաքապետարանն իրականացրել է բնակելի շենքերի ջեռուցման ներքին համակարգերի նորոգման և գործարկման աշխատանքները:

Արդյունքում 2009-2010թթ. ջեռուցման շրջանում շահագործվել են բոլոր 8 համակարգերը, ապահովելով Բաղրամյան փողոցի թիվ 6, 10, 12, 14, 46, 19, 23, և 25 շենքերի **240 բնակարանների** կենտրոնական ջեռուցումը: Համակարգերը շահագործվել են համատիրությունների կողմից:

Ջեռուցման շրջանի 5 ամիսների ընթացքում Ծրագրի կողմից իրականացվել է մոնիտորինգ, որի հիմնական նպատակն էր գնահատել կենտրոնական ջեռուցման համակարգերի աշխատանքի արդյունավետությունը, որակը և սպառողների համար այդ ծառայության մատչելիությունը: Մոնիտորինգն

իրականացվել է կաթսայատներում՝ գազի և էլեկտրաէներգիայի ծախսաչափերի և բնակարաններում՝ Ծրագրի կողմից տրամադրված սենյակային ջերմաչափերի, իսկ Բաղրամյան 46 շենքում՝ ջերմաստիճանը գրանցող սարքերի (HOBO) ցուցմունքների հիման վրա: Արդյունքում պարզվեց, որ 2009-2010թթ. ջեռուցման շրջանի ընթացքում բնակարանների օդի միջին ջերմաստճանը հիմնականում պահպանվել է 18-20⁰C-ի սահմաններում: Բնակիչները կատարել են մոծունները 100 տոկոսով և գոհ են եղել մատուցված ծառայությունից:



Բաղրամյան փ. թիվ 14 կաթսայատուն

Գազի ծախսի մոնիտորինգ (Ծրագրի կողմից տեղադրված գազի հաշվիչի ցուցմունքների հիման վրա)



Բաղրամյան փ. թիվ 46 շենք


Բնակարաններում ջերմաստիճանը գրանցող սարքերի (HOBO) տեղադրում



Բաղրամյան փ. թիվ 14 շենք

Պետք է նշել, որ շենքերի մեծ մասը էներգախնայողության տեսակետից գտնվում է ոչ բարվոք վիճակում՝ շենքերի մուտքերում փաստացի բացակայում են դռները և մասամբ լուսամուտները, իսկ եղածները ամբողջովին շարքից դուրս են եկել և չեն ծառայում իրենց նպատակին:

Այս պայմաններում շենքերի էներգախնայողությանն բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը դառնում է առաջնահերթ խնդիր՝ ինչպես բնակիչների, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների համար:



Բաղրամյան փ. թիվ 12 շենք

Կարևորելով շենքերի էներգախնայողությանն բարձրացմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտությունը, ինչպես նաև հաշվի առնելով Ծրագրի և Ապարան քաղաքապետարանի համագործակցության նախորդ տարիների դրական արդյունքները, քննարկվում է Բաղրամյան փողոցի թիվ 6, 8, 10, 12, 14, 19, 23, 25 և 46 բազմաբնակարան շենքերի մուտքերի վերակառուցման և մուտքի դռների ու լուսամուտների տեղադրման աշխատանքներին աջակցելու հնարավորությունը: Համապատասխան փորձնական ծրագրի իրականացման դեպքում ակնկալվում է շենքերի մուտքերի ջերմապաշտպանական ցուցանիշների զգալի բարձրացում, ինչը թույլ կտա նվազեցնել ջեռուցման կարիքների համար օգտագործվող գազի ծախսը մոտ 10% -ով, որն էլ իր հերթին կբերի ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը տարեկան մոտ 35 տCO₂համ չափով: